

VI. ԳՈՐԾԱՌՈՒԹԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2014թ.-ի ընթացքում հրավիրվել է ՀՀ ՎՊԽ 15 նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել է 77 հարց և արդյունքում ընդունվել է 138 որոշում, որոնցից՝ 50-ը նորմատիվ և 88-ը՝ անհատական:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է բարձրագույն կրթությամբ կադրերի գերակշռությամբ՝ 91.5% (46.9%-ը տնտեսագետ է): Աշխատակիցների 23.6%-ը կազմել են տղամարդիկ, իսկ 76.4%-ը՝ կանայք:

ՀՀ ԱՎԾ-ում 2014թ.-ին աշխատանքի է ընդունվել 47 մարդ, նրանցից՝

- քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ 37, այդ թվում՝ արտամրցութային կարգով՝ 24,
- քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝ 7,
- այլ աշխատողներ՝ 3:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմում 2014թ.-ին աշխատանքից ազատվել է 51 մարդ, նրանցից՝

- քաղաքացիական ծառայողներ՝ 35,
- քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի նշանակվածներ՝ 16,

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են	Ատեստավորվել են	Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
Բարձրագույն	2	-	-
Գլխավոր	23	15	-
Առաջատար և կրտսեր	66	52	-
Ընդամենը՝	91	67	-

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու նպատակով ՀՀ ԱՎԾ աշխատակազմում անց է կացվել 13 մրցույթ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ նախագահի 22.09.2014թ-ի թիվ ՆՀ-475-Ա հրամանագրով ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանին շնորհվել է առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան, ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից շնորհվել է՝ համապատասխան դասային աստիճան 2 քաղաքացիական ծառայողի, առավելագույն դասային աստիճան 6 քաղաքացիական ծառայողի: Աշխատակազմի ղեկավարի կողմից շնորհվել է՝ համապատասխան դասային աստիճան 30 քաղաքացիական ծառայողի, առավելագույն դասային աստիճան 9 քաղաքացիական ծառայողի:

Կատարելագործվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ ԱՎԾ միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման արդյունավետությունն ապա-

հովելու նպատակով ներդրված «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը:

Կատարվել են «Հայկական ծրագրեր» հաշվապահական-համակարգչային ծրագրով անձնակազմի անձնական տվյալների մուտքագրման աշխատանքեր:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացվել են ՀՀ ԱՎԾ սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատողների անձնական տվյալների մուտքագրման աշխատանքների միասնական էլեկտրոնային շտեմարան:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾ) հայտի համար հաշվարկվել է 2015, 2016, 2017 թվականներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար սահմանվող պաշտոնային դրույքաչափերը և հավելավճարներն ըստ պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման սանդղակի համապատասխան գործակիցների:

Պատրաստվել են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերի բնականոն աճը սահմանող իրավական ակտերի նախագծերը:

ՀՀ ԱՎԾ նախագահի՝

- 31.07.2014թ. թիվ 109-Ա հրամանով հաստատվել է 2014թ. հուլիսի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ և աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքային միավորների թվաքանակը՝ հաստիքացուցակը,
- 26.12.2014թ. թիվ 191-Ա հրամանով հաստատվել է 2015թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ և աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքային միավորների թվաքանակը՝ հաստիքացուցակը,
- 26.12.2014թ. թիվ 192-Ա հրամանով հաստատվել է 2015թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատատեղերի ցուցակը,
- 26.12.2014թ. թիվ 24-Գ հրամանով հաստատվել է 2015թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության հաստիքային միավորների թվաքանակը (հաստիքացուցակը) և պաշտոնային դրույքաչափերը:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի՝

- 27.12.2014թ. թիվ 421 հրամանով հաստատվել է 2015թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատակիցների ցուցակը,
- 27.12.2014թ. թիվ 422 հրամանով սահմանվել է 2015թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերը, հավելումները և հավելավճարները:

Ի դեմս ՀՀ ԱՎԾ նախագահի և աշխատակազմի ղեկավարի՝ կնքվել են աշխատանքային պայմանագրեր և համաձայնագրեր ՀՀ ԱՎԾ աշխատակազմում, Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչությունում, «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում և քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում նշանակված աշխատակիցների հետ:

Կառավարական թիվ 3 շենքի էլեկտրոնային անցագրային համակարգի անհատական մագնիսական քարտերի ծրագրավորման և տպագրության նպատակով կազմվել է անհրաժեշտ տեղեկատվական փաթեթ, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատողներին տրամադրվել են ծառայողական վկայականներ՝ համաձայն օրինակելի ձևի:

Ուսումնաարտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի՝ թվով 272 ուսանողների համար:

Բարեխիղճ աշխատանքի համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով 5 քաղաքացիական ծառայող և 2 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրով: